

Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>«Երաժշտություն» դասընթացի հնարավորությունները կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Թովմասյան Սաթիկ Վալոդյայի Երաժշտության ուսուցիչ 077395346 erg79@mail.ru Երաժշտություն 1-7</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) 	<p>Անվանումը - Արմավիրի մարզ, Սարդարապատի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ Հասցեն - Գյուղ Սարդարապատ, Աբովյան 65</p>

- Web կայքի հասցե

Ջեռախոս – 094 605555

Էլեկտրոնային հասցե –

anahit54@mail.ru

Սարդարապատի միջնակարգ դպրոցն ունի 780 աշակերտ, 28 դասարան, նախակրթարանի երկու խումբ: Դպրոցը բարեկամական և համագործակցային հարաբերություններ է ձևավորվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության Նաումբուրգ քաղաքի հետ՝ կրթության, մշակույթի, գյուղատնտեսության, տուրիզմի ոլորտներում փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով: Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնիա-Անհալթ երկրամասի պատվիրակությունը հերթական այցի շրջանակներում հյուրընկալվեց Սարդարապատի միջնակարգ դպրոցում՝ Սաքսոնիա-Անհալթ երկրամասում ՀՀ պատվավոր հյուպատոս Միխայել Շմիդտի ուղեկցությամբ: Կրթության փոխանակման ծրագիրը կարևոր նախաձեռնություն է հայ-գերմանական կապերի ընդլայնման համար:

Պետք է լինի 1-2 էջ

Բովանդակություն

Ներածություն

3

Հիմնական բովանդակություն

5

2

Ներածություն

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<p>Չետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել «Երաժշտություն» դասընթացի հնարավորությունները կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության գործում:</p> <p>Ի՞նչ մեթոդներ կարելի է կիրառել «Երաժշտություն» դասընթացի ընթացքում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության համար:</p>
<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Լրացնել միայն սովորողների մասնակցությամբ հետազոտությունների պարագայում</p>
<p>Չետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<p>Կրտսեր դպրոցականներ, չորրորդ դասարան (34 աշակերտ, որից 18 տղա, 16 աղջիկ)</p>

<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով և այլն)</p>	<p>Դիտարկում, զրույց, «Երաժշտության» ուսուցման գործընթացում «Շրջան» և «Փոխակերպում» մեթոդների կիրառումը</p>
<p>Ջետազոտության իրականացման ժամանակահատվածը</p>	<p>2023 թվականի սեպտեմբեր</p>

1-2 էջ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

Տարրական դպրոցում գեղագիտական դաստի-արակության մշակույթը կրտսեր դպրոցականի ներդաշնակ զարգացման կարևոր պայմանն է: Երաժշտությունը արվեստի այն առանձնահատուկ տեսակն է, որում ամփոփված են մարդ-կույթյան իմացական, հուզական, գեղագիտական լիցքերը, մեղեդու ռիթմի, ներդաշնակության, մեջխտացած է ժողովրդի հոգևոր մշակույթի ողջ գունագեղ երանգապնակը: Երաժշտությունը հուզում է մարդուն, նրա հոգում հարուցում ամենատարբեր հույզեր ու զգացմունքների անսահման բազմազանություն: Երաժշտական կերպարը հյուսված է մարդկային զգացմունքներից ու ապրումներից:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության, երաժշտական մշակույթի զարգացման հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է անձի դաստիարակության բնագավառում առկա բազմաթիվ խնդիրների վերանայման անհրաժեշտությամբ: Կրտսեր դպրոցականների երաժշտական մշակույթի, գեղագիտական դաստիարակության զարգացման խնդիրը արդի ժամանակահատվածում տարրական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում առաջնային նշանակություն է ձեռք բերում: Անձի գեղագիտական դաստիարակության

խնդիրը դիտարկել են հանրահայտ մանկավարժներ Վ.Ա.Սուխոմլինս-կին, Ա.Ս.Մակարենկոն, Կ.Դ.Ուշինսկին, Ղ.Աղա-յանը: Անձի գեղագիտական մշակույթի զարգացման հարցերը խորապես ուսումնասիրվել են մանկավարժներ Դ.Բ.Կաբալևսկու, Լ.Վ.Շկոլ-յարի, Վ.Ա.Շկոլյարի, Է.Բ.Աբդուլինի, Մ.Ս.Մագ-մանյանի, Կոմիտասի, Յու.Վ.Յուզբաշյանի, Ս.Ա.Մելիքյանի կողմից: Այդ ուսումնասիրութ-յուններում մշակվել է կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության բովան-դակությունը, բացահայտվել են տարրական դպրոցում երաժշտական-գեղագիտական դաս-տիարակության տեսական և գործնական կող-մերը, ձևերն ու մեթոդները, որոնցում շեշտվում է կրտսեր դպրոցականի անձի գեղագիտական-երաժշտական դաստիարակության կարևորու-թյունը: Վերջին տարիներին կրտսեր դպրոցա-կանների գեղագիտական մշակույթի զարգաց-ման արդյունավետ ուղիների բացահայտմանն ուղղված հետազոտությունների վերլուծություն-նը ցույց է տալիս, որ երաժշտության ուսուցման արդի մեթոդները՝ իրենց տեսական և գործնա-կան նշանակությամբ, արտացոլում են քննարկ-վող հիմնախնդրի տարբեր տեսանկյուններ՝ որոնք հիմնականում կապված են ուսուցման ձևերի, միջոցների,

մեթոդների մշակման և ներդրման հետ [6, էջ 400]:

Գեղագիտական դաստիարակության դերը կրտսեր դպրոցականների անձի բազմակողմ-նի զարգացման գործում անկարելի է թերա-գնահատել: Չափազանց մեծ և բազմազան է արվեստի դերը գեղագիտական դաստիարակության անցկացման ընթացքում: Ամեն ինչից առաջ այն ունի իմացական նշանակություն, քանի որ նպաստում է կրտսեր դպրոցականի գիտակցության, զգացմունքների, հայացքների, հույզերի և համոզմունքների զարգացմանը:

Արվեստն ու գեղագիտական դաստիարակությունը մեծապես նպաստում են անձի բարոյակա-նության զարգացմանը [6, էջ 400]: Արվեստն ու երաժշտությունը նպաստում են մարդու հոգևոր վեհությանը: Երաժշտությունը մեծ ազդեցություն է ունենում մարդու ներքին հոգեկան զարգացման վրա: Երաժշտությունը, երգը, արվեստը զարգացնում է մարդու գեղագիտական կուլտուրան, սովորեցնում է հասկանալ գեղեցիկը, ապրել գեղեցիկի օրենքով: Սակայն, արվեստի գեղեցկությունը զգալու համար, անհրաժեշտ է այն նախ և առաջ հասկանալ, այսինքն մարդուց պահանջվում է նախնական պատրաստվածություն: Անգամ դասական սիմ-ֆոնիան չի գրգռի մարդու հետաքրքրությունը, եթե նրա մեջ մշակված չի

երաժշտությունն ունկնդրելու տեխնիկա: Հանրակրթական դրա-րոցի հիմնական խնդիրն է ապահովել աշակերտին, հատկապես կրտսեր դպրոցականին անհ-րաժեշտ գեղագիտական պատրաստվածութ-յուն, ներմուծել նրանց մեջ արվեստի աշխարհի ճանաչում, այն դարձնելով իմացության միջոց, զարգացնելով մտածողությունը և բարոյապես կատարելագործել [4, էջ 246]:

«Գեղագիտական դաստիարակություն» հաս-կացությունը սերտորեն կապված է «Եսթետիկա» (գեղագիտություն) հասկացության հետ, որը նշանակում է գիտություն գեղեցիկի մասին: Եսթետիկա բառը թարգմանաբար նշանակում է զգացողություն, զգացմունք: Այդ պատճառով, գեղագիտական դաստիարակությունը նշանա-կում է գեղեցիկի նկատմամբ հույզերի ձևավո-րում: Գեղագիտական դաստիարակության էությունը կայանում է կրտսեր դպրոցական-ների գեղարվեստական-գեղագիտական գոր-ծունեության կազմակերպման մեջ, որն ուղղ-ված է կյանքում, արվեստում գեղեցիկը տեսնե-լու և ճանաչելու նրանց ընդունակությունների ձևավորմանը, գեղագիտական պատկերացում-ների, հասկացությունների, ճաշակի մշակմա-նը, արվեստի բնագավառում ստեղծագործա-կան ունակությունների զարգացման [2, էջ 522]:

Քանի որ գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է արվեստի միջոցով, նրա բովանդակությունը երաժշտության հետ մեկտեղ պետք է ընգրկի կրտսեր դպրոցականների կողմից արվեստի տարբեր ճյուղերի ուսումնասիրությունը՝ գրականություն, կերպարվեստ, պար, բեմական արվեստ և այլն [1, էջ 451]:

Գեղագիտական դաստիարակության էական կողմերից է նաև կյանքի, բնության, մարդու բարոյական կերպարի վարքի մեջ նրա գեղագիտական մշակույթի, բարոյական արժեքների ճանաչումը: Մեր հետազոտությունն ուղղված է կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության գործընթացում «երաժշտություն» առարկայի ընձեռած հնարավորությունների կիրառման, իրացման եղանակներին, մեթոդ-ներին [5, էջ 127]:

Գեղագիտական դաստիարակության իրակա-նացման ընթացքում նախ և առաջ անհրաժեշտ է կրտսեր դպրոցականների մեջ ձևավորել գեղագիտական պահանջմունքներ արվեստի բնագավառում, ըմբռնել հասարակության գեղ-արվեստական արժեքները: Գեղագիտական դաստիարակության բովանդակության կարե-վորագույն տարրերից է կրտսեր դպրոցական-ների մեջ մեղեդու, երաժշտության ունկնդրման, գեղարվեստական ընկալումների զարգացումը:

Երեխան պետք է կարողանա ընկալել գեղեցիկն ինչպես երաժշտության, երաժտական ստեղծագործության, այնպես էլ արվեստի տարբեր բնագավառներում, կյանքում, բնության, շրջա-կա միջավայրի, մարդկանց վարքի մեջ:

Գեղագիտական դաստիարակության տարր է համարվում նաև գիտելիքների յուրացումը, որոնք կապված են երաժշտության, արվեստի մասին դատողություններ անելու կարողության հետ: Աշակերտները պետք է կարողանան վերլուծել արվեստի, երաժտական ստեղծագործությունների, մեղեդու բովանդակությունը և բարոյական-գեղագիտական

ուղղվածությունը: Կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության բովանդակության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում գեղագիտական ճաշակի ձևավորումը, գեղեցիկն ընկալելու, զգալու և վերապրելու կարողությունը:

Անհրաժեշտ է կրտսեր դպրոցականներին սովորեցնել զգալ գեղեցիկը, մեղեդու, երաժշտության, արվեստի ստեղծագործության ներ-դաշնակությունը, ինչպես նաև ձգտում, կարիք դեպի վարքագծի կուլտուրայի կատարելագործում:

Գեղագիտական դաստիարակության կարևոր-րագույն տարրերից է աշակերտների հաղորդակցումը երաժշտական, գեղարվեստական ստեղծագործությանը, նրանց ունակությունների և հակումների

զարգացումը երաժշտութեան, կերպարվեստի, գրականության, արվեստի այլ բնագավառներում [3, էջ 287]:

Գեղագիտական դաստիարակությունը սկսում է հանրակրթական դպրոցում ցածր դասարան-ներից տարբեր ուսումնական առարկաներ ուսումնասիրելու ընթացքում: Այդ առարկա-ներն են մայրենի լեզուն, երաժշտությունը, կերպարվեստը, բնագիտությունը և այլն:

Գեղագիտական դաստիախակության իրակա-նացման համար կազմակերպվում են արտա-դասարանական և արտադպրոցական պարա-պմունքներ: Կրտսեր դպրոցականների հետ գեղեցիկի մասին տարվող զրույցները նրանց մեջ ձևավորում են կայուն պահանջմունք, կարիք և գեղագիտական զգացմունքներ,, ձևավորում են գեղագիտական կուլտուրա:

Մեր հետազոտության շրջանակներում ուսում-նասիրել ենք տարիքային այն առանձնահատ-կությունները, որոնք հատուկ են կրտսեր դպրոցականներին, և որոնք պետք է հաշվի առնել նրանց գեղագիտական դաստիարակու-թյան ընթացքում:

Միանգամայն դժվար է գեղագիտական իդեալներ, գեղարվեստական ճաշակ ձևավորել, երբ մարդու անձն արդեն ձևավորվել է: Անհատի գեղագիտական զարգացումը սկսվում է վաղ մանկությունից: Որպեսզի հասուն մարդը հոգեպես հարուստ դառնա, անհրաժեշտ է հատուկ

ուշադրություն դարձնել կրտսեր դպրոցական տարիքի երեխա-ների գեղագիտական դաստիարակությանը:

Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի ժամանակաշրջանը ամենաորոշիչն է գեղագիտական դաստիարակության տեսանկյունից: Չենց այս տարիքում է ձևավորվում աշխարհի հանդեպ վերաբերմունքը, որն աստի-ճանաբար վերածվում է անհատի հատկանիշ-ների: Անհատի բարոյագեղագիտական կարևոր որակները ձևավորվում են մանկության վաղ շրջանում և հարաբերականորեն անփոփոխ տեսքով պահպանվում ողջ կյանքի ընթացքում: Չնարավոր չէ չափահաս կյանքում հանկարծ կայացած մարդ դառնալ, եթե նախադպրոցա-կան և կրտսեր դպրոցական տարիքում այդպես էլ չեն սովորել վստահորեն արտահայտել սեփական կարծիքը և վստահորեն գործել: Իհարկե, կյանքի ընթացքն ինչ-որ բան փոխում է և ներմուծում իր ուղղումները, սակայն, հենց կրտսեր դպրոցական տարիքում է, որ գեղագի-տական դաստիարակությունը հիմք է հանդի-սանում դաստիարակչական հետագա ողջ աշխատանքի համար:

Կրտսեր դպրոցական տարիքի առանձնահատ-կություններից մեկը երեխայի մուտքն է դպրոց: Նրա մոտ հայտնվում է գործունեության նոր, առաջավոր տեսակ՝ ուսումը: Երեխայի համար գլխավոր մարդը կյանքում դառնում է ուսուցիչը: Նրա համար

ամեն ինչ սկսվում է ուսուցչից, ով օգնում է հաղթահարել կյանքի առաջին դժվար քայլերը: Նրա միջոցով են երեխաները ճանաչում աշխարհը, հասարակական վարքագծի նորմերը: Ուսուցչի հայացքները, նրա ճաշակը, նախասիրությունները դառնում են նրանց սեփականը: Հայտնի է, որ հասարակական կարևորություն ունեցող նպատակի, դեպի այն շարժվելու հեռանկարի՝ երեխաներին ոչ հմտո-րեն առաջադրումը նրանց անտարբեր են թողնում: Եվ հակառակը, ուսուցչի հետևողա-կան և վստահ աշխատանքի վառ օրինակ է այն, որ նրա անկեղծ հետաքրքրվածությունը և խանդավառությունը երեխաներին հեշտութ-յամբ գործի են դնում: Կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտական դաստիարակութ-յան մյուս առանձնահատկությունը կապված է դպրոցական ճանաչողական գործընթացում կատարվող փոփոխությունների ոլորտի հետ: Օրինակ՝ կրտսեր դպրոցականների մոտ գեղա-գիտական իդեալների ձևավորումը՝ որպես նրանց աշխարհընկալման մի մաս, բարդ և երկարատև գործընթաց է: Այդ մասին վկայում են հայտնի հոգեբաններն ու մանկավարժները: Առանձին պայմաններում, ընկերների, մեծահասակների, գեղարվեստական ստեղծագործութ-յունների, կյանքի հարվածների ազդեցությամբ իդեալները կարող են արմատական փոփոխութ-յունների ենթարկվել: Երեխաների

մոտ գեղա-գիտական իդեալների ձևավորման մանկավար-ժական մոտեցումը՝ նրանց տարիքային առան-ձնահատկությունների հաշվառմամբ, այն է. որ հենց վաղ մանկությունից կայուն բովանդակա-յին կատարյալ պատկերացում ձևավորվի գեղե-ցիկի, արվեստի, երաժշտության, կերպարվեստ-ի, քանդակի, գրականության, հասարակու-թյան, մարդկանց միջև հարաբերությունների մասին՝ դարձնելով այն բազմազան, յուրաքան-չյուր փուլում նոր և գրավիչ:

Կրտսեր դպրոցական տարիքում գեղագիտա-կան իդեալի հետ ծանոթանալու գլխավոր ձև են մանկական գրականությունը, մուլտֆիլմերը և կինոն: Գրքային, մուլտիպլիկացիոն կամ կինոյի հերոսները, լինեն դրանք մարդիկ, կենդանիներ թե մարդկային որակներով օժտված ֆանտաստիկ հորինվածքային կերպարներ, բարու և չարի, գթասրտության և կոպտության, արդա-րամտության և ստի կրողներ են: Իր ընկալման աստիճանով փոքր երեխան դառնում է բարու հետևորդը, համակրում է բարու պայքարը չարի դեմ առաջնորդող հերոսներին: Սա արդեն, անկասկած, որպես աշխարհընկալման մի մաս իդեալի ձևավորումն է այն առանձնահատուկ ձևով, որը փոքրերին թույլ է տալիս հեշտու-թյամբ մուտք գործել հասարակական իդեալնե-րի աշխարհ: Կարևոր է, որպեսզի երեխայի առաջին

իդեալական պատկերացումները չմնան միայն բառային-կերպարային արտա-հայտման մակարդակում: Անհրաժեշտ է մշտապես, բոլոր միջոցներով երեխային դրդել նրան, որպեսզի իր վարքագծով և գործունեու-թյամբ սովորի հետևել սիրելի հերոսներին, իրապես բարություն և արդարություն ցուցա-բերի, իսկ սեփական ստեղծագործությունում՝ նկարներ, երգեր, բանաստեղծություններ, իդե-ալը արտահայտել կարողանա: Կրտսեր դպրո-ցական տարիքից փոփոխություններ են տեղի ունենում շարժառիթային ոլորտում: Արվեստի, գեղեցկության, երաժշտության, շրջապատող իրականության նկատմամբ երեխաների վերա-բերմունքի շարժառիթները գիտակցվում և տարբերակվում են: Ճանաչողական խթանին այս տարիքում ավելանում է նոր՝ գիտակցային մոտիվը, դրդապատճառը: Սա արտահայտվում է նրանում, որ երեխաների մի մասը արվեստին, իսկապես, վերաբերվում է գեղագիտորեն: Նրանք հաճույք են ստանում գիրք կարդալուց, երաժշտություն լսելուց, նկարելուց, ֆիլմեր դիտելուց: Երեխաները դեռևս չգիտեն, որ հենց դա է գեղագիտական վերաբերմունքը: Սակայն նրանց մեջ արդեն իսկ ձևավորվել է գեղագի-տական վերաբերմունք արվեստի և կյանքի նկատմամբ: Արվեստի հետ հոգեպես հաղոր-դակցվելու ձգտումն աստիճանաբար նրանց համար վերածվում է պահանջմունքի:

Մյուս երեխաներն արվեստի հետ շփվում են սեփական գեղագիտական պատկերացումներից դուրս: Նրանք ստեղծագործությանը ռացի-ոնալ են մոտենում՝ գիրք կարդալու կամ ֆիլմ դիտելու մասին խորհուրդ ստանալուց հետո, երեխաները կարդում և դիտում են դրանք՝ առանց իմաստը խորապես ընկալելու և միայն դրա վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու համար: Պատահում է նաև, որ լսում դիտում կամ կարդում են՝ հեղինակավոր պատկերացումներից ելնելով: Ուսուցչի կողմից արվեստի նկատմամբ երեխաների մոտեցման իրական մոտիվների իմացությունը թույլ է տալիս ուշադրությունը կենտրոնացնել իրական գեղագիտական վերաբերմունքի վրա:

Գեղեցկության, շրջակա միջավայրի, շրջապատող մարդկանց, երևույթների, իրերի գեղեցկության զգացողությունը երեխայի մոտ հատուկ հուզական-հոգեբանական իրավիճակներ է ստեղծում, հետաքրքրություն է առաջացնում, սրում է հետաքրքրասիրությունը, հիշողությունը: Վաղ մանկությունում երեխաներն ապրում են անմիջական զգայական կյանքով: Ուժեղ հուզական ապրումները երկար պահ-պանվում են հիշողության մեջ, հաճախ վերա-ծվում վարքագծի շարժառիթների, հեշտացնում են համոզմունքների, հմտությունների և սովորությունների մշակման գործընթացը: Կրտսեր

դպրոցականի հուզական վերաբերմունքն աշխարհի նկատմամբ մանկավարժորեն օգտա-գործելը մանկական գիտակցության մեջ ներ-թափանցելու, այն ընդլայնելու, ամրացնելու, խորացնելու, կառուցելու կարևորագույն ուղի-ներից է: Հուզական վերաբերմունքը և երեխայի իրավիճակը գեղագիտական դաստիարակու-թյան իրագործելիության չափանիշներն են: Այս կամ այն երևույթի նկատմամբ մարդու հուզա-կան վերաբերմունքով ցույց է տրվում նրա զգացմունքների, ճաշակի, հայացքների և կամ-քի արտահայտման աստիճանը [5, էջ 127]:

Գեղագիտական դաստիարակության խնդիրը բավականաչափ ուսումնասիրված է հայրենի և արտասահ-մանյան գրականության մեջ: Այն կարևոր տեղ է գրավեցնում ուսումնադաստիա-րակչական գործընթացի համակարգում, քանի որ դրանով է պայմանավորված անհատի գեղագիտական որակների, նրա էական ուժերի, հոգևոր պահանջմունքների բարոյական իդե-ալների, արժեքների անձնային և հասարակա-կան պատկերացումների, աշխարհայացքի զարգացումը: Բոլոր այս որակները զարգանում են տարբեր գործոնների ազդեցությամբ: Դաս-տիարակչական նշանակություն ունեն և կրթու-թյունը, և աշխատանքը, և շրջապատող իրա-կանությունը՝ կենցաղը, ընտանիքը, միջանձ-նային հարաբերությունները, այն

ամենը, ինչը կարող է գեղեցիկ լինել: Որպես գեղեցիկի հիմ-նական կրող՝ արվեստը նաև գեղագիտական դաստիարակության միջոց է: Կյանքի և արվեստի գեղագիտական երևույթների ներգործու-թյունն անձի վրա կարող է տեղի ունենալ ինչպես նպատակաուղղված, այնպես էլ ինք-նաբերաբար: Այս գործընթացում հսկայական դեր է խաղում դպրոցը: Ուսումնական ծրագ-րում ամրագրված առարկաներից կերպար-վեստի, երաժշտության, գրականության հիմքն արվեստն է, որն էլ իր հերթին գեղարվեստական դաստիարակության հիմնական միջոց է: Կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունն արվեստի նկատմամբ բա-վականին մեծ է, իսկ հետաքրքրության առկա-յությունը՝ ճիշտ դաստիարակության պայման-ներից առաջինը: Բացի այդ, արվեստի մասին նյութը հուզական մեծ ներուժ ունի, լինի դա երաժշտական, գրական թե գեղարվեստական ստեղծագործություն: Յենց հուզական ներգոր-ծության ուժն է երեխայի գիտակցության մեջ ներթափանցելու ճանապարհը և կրտսեր դպրոցականի գեղագիտական որակների ձևավորման միջոցը [2, էջ 522]:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքը հա-տուկ տարիք է գեղագիտական դաստիարա-կության համար, որտեղ դպրոցականի կյան-քում գլխավոր դերը

	<p>խաղում է ուսուցիչը: Օգտվելով սրանից՝ հմուտ մանկավարժներն ունակ են ոչ միայն կայուն հիմք ստեղծելու անհատի գեղագիտական զարգացման համար, այլև գեղագիտական դաստիարակության միջոցով ձևավորելու մարդու իրական աշխարհա-յացքը, քանի որ հենց այս տարիքում են ձևավորվում աշխարհի նկատմամբ երեխայի վերաբերմունքը, և ապագա անհատի գեղագի-տական կարևոր որակները:</p>
<p>Չետագոտության ընթացքը</p>	<p>Ուսումնասիրել ենք կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության զարգաց-ման սոցիալ-հոգեբանական հիմքերը, վերլուծել նրանց գեղագիտական դաստիարակության դերը, նշանակությունը, դրսևորման արտա-հայտվածությունը վարքում, առաջադրել ենք կրտսեր դպրոցականների կայացման, անձնա-յին աճի և զարգացման արդյունավետ մեթոդ-ներ «Երաժշտություն» դասընթացի ուսուցման գործընթացում գեղագիտական դաստիարա-կության խթանման միջոցով:</p> <p>Չետագոտությունն շրջանակներում ներկայա-ցրել ենք կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության</p>

գործընթացում «Երաժշտություն» առարկայի ուսուցման մեր փորձը:

Ավելի քան քսան տարի աշխատելով Արմավիրի մարզի Սարդարապատի միջնակարգ դպրոցում որպես երաժշտության ուսուցիչ, երգչախմբի խմբավար, տարբեր եղանակներ եմ փորձել սովորողների գեղագիտական դաստիարակու-թյունն ապահովելու, իրացնելու համար: Ուզում եմ ներկայացնել կրտսեր դպրոցականների մոտ իմ կարծիքով արդյունավետ «Շրջան» և «Փոխակերպում» մեթոդների կիրառման իմ փորձը: «Շրջան» մեթոդն արդյունավետ է խմբերում, որտեղ սովորողների փորձառութ-յունը որոշակիորեն ձևավորված ռեսուրս է: Այս մեթոդը կիրառելիս պետք է համոզված լինեմ, որ սովորողների նախնական փորձառությունը կենցաղում, ընկերային միջավայրում որոշակի արժեք են ներկայացնում թեման առավել լավ ըմբռնելու համար: Օրինակ՝ յուրազանջյուր անհատ ունի գեղեցիկի մասին իր պատկերա-ցումները և արտահայտման միջոցները:

«Շրջան» մեթոդն օգտագործում եմ երաժշտա-կան ստեղծագործությունն ունկնդրելուց հետո: Տալիս եմ մեկ կամ մի քանի հարց թեմայի վերաբերյալ և խնդրում եմ, որպեսզի սովորող-ները ինքնուրույն գրի առնեն իրենց մոտ ծագած մտքերը, հույզերը, զգացողությունները:

Առաջարկում եմ յուրաքանչյուրին միմյանց հաջորդելով մեկ թույլի ընթացքում կիսվել գրի առնված սեփական գրառումներով: Գրի եմ առնում աշակերտների կողմից հնչեցրած մտքերի հիմնական գաղափարները մեկ երկու բառով: Սովորողների մեծ խմբի դեպքում հարցնում եմ ըստ կամավորության կամ միայն որոշակի թվով աշակերտների, իսկ վերջում խնդրում եմ հնչեցնել միայն գրատախտակին բացակայող մտքեր, հույզեր, կարծիքներ: Այդ ընթացքում խնդրում եմ մյուսներին լսել, որպեսզի չկրնեն ընկերոջ կողմից նշած նույն միտքը: Մեթոդն օգնում է վերհանելու տարբեր տեսակետներ՝ ստեղծելով ապահով մասնակցության մթնոլորտ:

Կրտսեր դպրոցականների դեպքում առավել արդյունավետ է «Փոխակերպում» մեթոդը: Սովորողներին ունկնդրելու համար տրամադրում եմ դասական որևէ երաժշտության ձայնագրություն և հանձնարարում իրենց մեջ առաջացած հույզերը ներկայացնել, փոխանցել մեկ այլ ձևաչափով՝ նկարով: Առաջարկում եմ երեխաներին ներկայացնել փոխակերպված հույզերը, անդրադառնալով թե երաժշտության ազդեցության տակ իր մոտ ինչ մտքեր կամ հույզեր են առաջացել, ինքն ինչ է նկարել և ինչու: Ընտրում եմ կրտսեր դպրոցականների համար առավել հարմար դասական որևէ երաժշտության ձայնագրություն փոխակերպման համար, և

	<p>որոշում, թե ինչ իրավիճակ-ներում է առավել ճիշտ այն օգտագործել:</p> <p>Կատարյալ կլինի, եթե նույն թեմայի վերաբերյալ մի քանի եղանակ՝ նկար, քանդակ, տեքստ, պար, բեմադրություն և այլն առաջարկվի, սակայն դա օգտագործում եմ միջին դպրոցում՝ 5-6 դասարաններում: Փոխակերպման վերջում խնդրում եմ սովորողներին նշել մեկ-երկու կարևոր ուղերձ, որը պարունակում է իրենց վերափոխված միտքը կամ հույզը: Գրում եմ ուղերձների իմ տարբերակները (ՌԻՏ) և համեմատում դրանք աշակերտների կողմից հնչեցրած ուղերձների հետ: Տալիս եմ աշա-կերտներին թեմային առնչվող մի քանի հարց, որոնք թույլ կտան ինձ ստուգել տվյալ վարժու-թյան միջոցով աշակերտների ձեռք բերված գիտելիքը, կարողությունը կամ հմտությունը, գեղագիտական, բարոյական արժեքը և վերջնարդյունքներին հասնելու վկայությունը:</p>

Եզրակացություններ, առաջարկություններ

<p>Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Արվեստի, երաժշտության՝ ուսումնադաստիարակ-չական գործընթացում կիրառվող միջոցներն արդ-յունավետ են կրտսեր դպրոցականների գեղա-գիտական դաստիարակության առումով: Փորձա-ռու մանկավարժներն ընդունակ են արվեստի միջոցներով դաստիարակելու անձի իսկական գեղագիտական որակներ՝ ճաշակ, գեղեցիկը գնա-հատելու, ընկալելու և ստեղծելու ընդունակություն: Երեխայի գեղագիտական դաստիարակությունը լիարժեք իրա-կանացնելով կրտսեր դպրոցական տարիքում՝ ապահովում ենք այնպիսի անձի կայա-ցումը, որն իր մեջ կհամադրի հոգևոր հարստու-թյուն, գեղագիտական իսկական որակներ, բարո-յական մաքրություն ու մտավոր բարձր ներուժ:</p> <p>«Երաժշտություն» ուսումնական առարկան սովորողների գեղագիտական դաստիարակությունն ապահովելու, իրացնելու համար լայն հնարավորու-թյուններ ունի: Կրտսեր դպրոցականները պետք է կարողանան ներկայացնել ունկնդրվող երաժշտա-կան ստեղծագործությունից ստացած տպավորութ-յունները, բնութագրել սեփական զգացողություն-ները գրագետ կապակցված</p>
---	---

	<p>խոսքով կամ նկարելով, մեկնա-բանել ստեղծագործության հիմնական գաղափարը, անձնական տպավորությունները, զգացողությունները և նախասիրությունները, հիմ-նավորել և գնահատել կատարումը, սինթեզել և կապել գիտելիքներն ու անձնական փորձը երաժ-շտական ստեղծագործությունը հասկանալու և ընկալելու համար:</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	

1-2 էջ

Օգտագործված գրականության ցանկ

1. Харламов И.Ф. Педагогика. Москва. 2000. - 451 с.
2. Подласый И.П. Педагогика начальной школы. Москва. 2000. - 522 с.
3. Слостенин В.А. Шиянов Е.Н. Общая педагогика. Учебное пособие. Москва. 2004. - 287 с.
4. Дмитриева Р.А. Эстетическое воспитание. М. 1988. - 246 с.
5. Ефремов В.И. Творческое воспитание и образование детей. Пунзаю 2001. - 127 с.
6. Мир детства. Младший школьник/ Под редакцией А.Г.Хрипковой: Отв. ред. В.В.Давидов. М. Педагогика.1981. - 400 с.